



ԽՍՀՄՆԱՎԱԿԱՆԻ-ԴՐԵԴԲՈՒՆ

Ի. Գ. ՌԱԶԵԽ

Ուշնիքիձենեվք արևոտ  
ԱՆԴՐԱՎԵՆՅԱ ԾՈՐԴՄԱՆ  
ՔՐԻՊԱՂԻ

ՀՈՐԵՐԻ  
ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՆՈՐՈԳՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՍՏԱԽԱՆՎՅԱՆ  
ՄԵԹՈԴՆԵՐԸ

Թողարկում 1

622  
11-48



ՊՄԴ-84-ՆԱ.Ժ.4-Ա.դր.ՊՄԴ-84

Բագր.՝ 1939 թ. Առաջինական

04 AUG 2010

ԲԱՆՎՈՐ ՀԵՂԻՆԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱԳՎԻ ԿԱՐԻՆԵՏ

Ար. Պ. Մ. Գ. Տ. Լ.

(Բաղու կոմունիստիչեսկայա վողոց, Կովկասի  
նավթագործների միության շենք 2-րդ հարկ  
սենյակ 21)

Կարինետը տալիս ե բանավոր և գրավոր կոն-  
սուլտացիա՝ բանվոր հեղինակներին գրքերի պահանջ  
կազմելու հարցերին վերաբերյալ նյութերի ըն-  
տրության և սխտումատիզացման, տպագրության  
պատրաստելու և հատուկ հարցերի մասին, գրքեր  
գրելու կապակցությամբ:

Կարինետը կոնսուլտացիա յե տալիս նաև ըրո-  
շյուրներ կազմելու «Ստախանովականի գրադա-  
բանի» համար:

Կարինետն անց ե կացնում բոլոր շրջանների  
կուլտուրայի պատաներում կանոնավոր կոնսու-  
տացիա՝ բանվոր—նավթագործների համար և ամեն  
կերպ աշակցում ե բրոյւրներ կազմելուն:

Կոնսուլտացիան տեղի ունի ամեն մի շրջանի  
համար առանձին սահմանված որերում յերեկոյան  
ժամը 7-ից մինչեւ 9-ը:

Կաբինետը բաց ե ամեն որ, բացի ընդհա-  
նուր հանգսյան որերից:



ՍՍՀԱՆՈՎՈԿԱՆԻ-ԳՐԱԴԱՐԱՆ

629  
Դ - 48  
ՄԿ

Ի. Դ. ՌՍԿԻ  
Ողջոնոկիծնեվթ տրեստի  
ստորգետնյա նորոգման  
բրիգանձիք

Ար. Պ. Մ. Գ. Տ. Լ. ԲԱՆՎՈՐ  
ՀԵՂԻՆԱԿԻ ԲԱԳՎԻ ԿԱՐԻՆԵՏ



ԹՈՂԱՐԿՈՒՄ 4

ՊՄԳՏՀ — ԾԱԺԿ — ԱԴՐՊՄԳՑ  
ԲԱԳՎԻ — 1939 — ՄՈՍԿՎԱ

16.07.2013

13015

№ 4759

Ա. Ն.-3 (2)-1

Խմբագիր՝ չ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Տես. Խմբագիր՝ պրոպրետեր՝ ՅԵ ԱՍԻՊՈՎ  
Թարգմանչութեան Համականութեան



2012

39

Сдано в набор 1/XI 1938 г.

Разрешено к печати 16/I 1939 г.

3/8 печ. л. 37.628 тип. зн.

Главлит № 7549. Заказ № 2710. Тираж 500.  
Тип. „Кр. Восток“ Баку, Ул. Юного пионера, 84.

## Ներածություն

1930 թվականից յես աշխատել եմ վորպես  
ստորպետնյա նորոգման կլյուչներ։ 1936  
թվին յես խմացա Ալեքսեյ Ստիանովի աշ-  
խատանքի մասին և առաջացած ստախա-  
նովյան շարժման մասին։ Վճռելով, փոր իմ  
աշխատանքում նույնպես կարելի յե արձա-  
տացնել ստախանովյան մեթոդը, յես իմ  
ստորպետնյա նորոգման բրիգադի աշխա-  
տանքի մեջ մտցրի ստախանովյան պըհոմ-  
ներ։ Իմ աշխատանքի փորձի մասին ցան-  
կանում եմ այժմ հաղորդել։

Բրիգադների աշխատանքը  
յեվ նրանց կազմը

Ստորպետնյա նորոգման բրիգադների աշ-  
խատանքը հիմնականում կայանում է հետե-  
յալում։

1. Նախապատրաստական բրիգադը կառա-  
րում ե աշխատատեղի նախնական լիակա-  
տար պատրաստում.

2. Հիմնական բրիգադը կատարում ե հեր-  
թափոխության ընդունում և հանձնում,  
հիմնական աշխատանքները՝ գրաֆիկով, և  
հորերը նորոգումն ավարտելուց հետո, հանձ-  
նում ե համապատասխան արձանագրու-  
թյամբ:

Պատմեմ բրիգադների կազմի մասին:

Նախապատրաստական բրիգադն աշխատում  
ե մի հերթափոխությամբ: Ներկայումս նա  
բաղկացած ե մեկ բրիգադից և հինգ բան-  
վորից: Նրա պարտականությունն ե լիովին  
նախապատրաստել հորը, այսինքն, հորին  
մոտեցնել ծանր սարքավորումներ և գոր-  
ծիքը, կանոնավոր դասավորել խողովակ-  
ները, կատարել հորի սարքավորումը, շինել  
հատակները, կամուրջները և այլն:

Բացի նախապատրաստական բրիգադից,  
ստորգետնյա նորոգման սիստեմում են գլո-  
ւում.

ա) մեկ փականագործ, վորի պարտակա-

նությունն ե խորագաշ նասուների նախա-  
պատրաստումը, ստուգումը, խորագաշ նա-  
սուների խնամքը և մանր գործիքի նորո-  
գումը:

բ) չորս բանվոր ~ ծանրությունների աե-  
ղափոխման համար, վորոնք զրադշած են  
խորովակների փոխադրությամբ:

Պետք ե նշել, վոր մինչև ստախանովյան  
մեթոդի սահմաննելը, բրիգադը բաղկացած  
եր 7 մարդուց, յոթերորդը հյուսն եր, վորը  
կատարում եր բացառապես հյուսնային  
աշխատանքներ և իր ձեռքի տակ ուներ մի  
սեվագործ բանվոր:

Եթե պատահում եր, վոր հյուսնային  
աշխատանքների կարիք չկա, նա մնում եր  
պարապ նստած, վորովինետև բացի հյուս-  
նային աշխատանքից ուրիշ վոչ մի աշխա-  
տանք չեր կատարում: Ստախանովյան  
աշխատանքի պայմաններում այդպիսի դրու-  
թյունն աննորմալ կլիներ: Բոլոր աշխա-  
տողներն 8 ժամվա ընթացքում բեռնավոր-  
ված են իրենց գործով: Կոնվելերի բնույթ  
ունեցող անընդհատությունը չպետք իսախ-

տվի: Յես վերացրի հյուսնի և սելվագործքանվորի պաշտոնները, բայց սովորեցրի բրիգադի ամեն մի անդամի (5 մարդուց) հյուսնային աշխատանքներ կատարելը, ինչպես կամուրջի, հատակի և բուրգի վերի մասի նորոգումը և այլն: Հյուսնի պարտականություններ կատարողն աշխատում եւ և վորպես բրիգադի անդամ, խողովակները քաշելում և փոխադրելում:

Այսպիսով աշխատանքի ստախանովան մեթոդը կրծատեց աշխատողների թիվը 7-ից մինչև 5 և կարգավորեց աշխատանքը: Նախապատրաստական բրիգադն իր աշխատանքով սերտ կերպով կապված եւ ստորգետնյա նորոգման բրիգադների հետ, վորոնց համար նա նախապատրաստում են որերը:

Նախապատրաստական բրիգադի համար միշտ աշխատանք կա. նրան ամեն որ նախորոք առաջադրանք եւ տրվում, վորը նապետք եւ ժամանակին կատարի, վորուեսզի չկանգնեցնի ստորգետնյա նորոգման բրիգադի աշխատանքը:

Հիմնական բրիգադը: Վերելակի (պոդյեմնիկ) աշխատանքը հանքերում կատարվում է գիշեր-ցերեկ, առանց վորեվելք ընդհատման: Այդ կապակցությամբ մեր հիմնական բրիգադի կազմը հեակալն ե՝ 4 հերթափոխություն, յուրաքանչյուրում մեկ կլյուչնիկ, մի բանվոր և մի տրակտորիստ\*: Նրանցից մեկը հանգստի որերի հերթափոխն ե: Բոլոր 4 հերթափոխություններն աշխատում են խիստ գրաֆիկով: Այդ բոլոր բրիգադները գլխավորում են յերկու բրիգադի բներ, վորոնք հերթով փոխարինում են միմիցանց:

Ներքափոխության ընդունումը  
յեվ պարտականությունների  
բաժանումը

Ստորգետնյա նորոգման բրիգադի հաջող աշխատանքի գլխավոր պայմանն ե՝ պար-

\* Ծանոթություն. — Ծրակառիստը յենթարկվում է տրակտորային բագային նրա աշխատավարձը կախված է այն բրիգադի աշխատանքից, վորի հետ նա աշխատում է լիակատար ընկերակցությամբ:

տականությունների վորոշակի բաժանումը  
բրիգադի առանձին անդամների մեջ և  
աշխատանքի կարգավորումը:

Հերթափոխությունն ընդունելիս կլյուչ-  
նիկի և բանվորի պարտականությունները  
բաժանվում են հետեւյալ կերպ՝

Հերթափոխության գալով, կլյուչնիկը  
նախ և առաջ վարպետից ստանում է նար-  
յադ կամ առաջադրանք: Նա պետք է  
իմանա, թե ինչ աշխատանք պետք է կատա-  
րի հորում: Հերթափոխությունը կլյուչնի-  
կից ընդունելով, ծանոթանում է, թե ինչ  
է արել վերջինս և ինչ պետք է անել այ-  
նունետեւ: Ապա իսկույն նա պարզում է հորի  
դրությունը, բուրգի վերի մասի\* (բլոկ)՝  
դրությունը, ստուգում ե տալերի սարքումը,

զննում և կանատը և նրա մեռյալ ծայրով  
բուրգի ամրացումը վոտքին, դրանից հետո  
ստուգում ե գործիքը:

Այդ միենույն ժամանակ բանվորն ըն-  
դունում է գործիքն (շղթայական, պնդողա-  
կային բանալիները և այլն):


Դործիքի համար հատուկ սեղան և դրված,  
վորպեսզի բանվորը չկունա հատակին, կամ  
գործիքի համար հորից շատ չհեռանա: Հեր-  
թափահությունն ընդունելուց հետո, բան-  
վանվորի վրա պարտականություն է դրված  
հետագայում հերթափոխությունն ընդու-  
նելուց հետո հետեւել գործիքի մաքրությանն  
ու կանոնավորությանը: Յեթե վորևե գոր-  
ծիք պակասում է, նա այդ մասին գեկու-  
ցում և վարպետին:

Հերթափոխությունն ընդունելով, թե կը-  
լյուչնիկը, թե բանվորն ստուգում են ան-  
վտանգության տեխնիկայի սարքվածքները,  
այսինքն, շղթաների և շարժվող մասերի  
պատվարները: Յեթե վորևե բան սարքին չե-  
այդ մասին իսկույն հաղորդվում ե բրիգա-  
դիրին:

\* Ծանոթություն. — Յեղել են դեպքեր  
հանք՝ բում, յերբ ընդխողավակային գերանները  
և անվակային առանցքակալներն ամրացրած չեն  
յեղել, վորի հետեւնքով աշխատանքի ժամանակ  
նրանք վերեվից վայր են ընկել: Դրա մասին  
բրիգադը պարտավոր է հաստատ հիշել:

Նախապատրաստական  
աշխատանքներ

Նախ և առաջ կլուզչնիկը և բանվորը  
միշտափին հորի մոտի կամուրջի վրա դար-  
սում են այն խողովակները, վորոնք նշված



Նկար 1.

են հորն իջեցնելու: Պետք է նրանց այնպես  
դասավորել վոր հորն իջեցնելու համար,  
առանց ժամանակ կորցնելու հեշտ լինի  
վերցնել:


Ինչպես ցուց ե արված նկար № 1-ում,  
խողովակների ներքին շարքը դարսած և

դերանների վրա, վորի հետեվանքով ամեն  
մի խողովակը հեղտությամբ կարելի յե  
ձանկել ելեվատորով:

Ֆերկը շարքը վերեվից դարսված ե  
այնպես, վոր խողովակների մուֆաավոր  
ծայրերն առաջ են ընկած և դրա համար,  
նրանց ել հեշտությամբ կարելի յե բռնել:  
Դասավորելով խողովակները, կլուզչնիկն  
անցնում է նրանց չափմանը և մուֆթային  
միացումների ստուգմանը:

Միևնույն ժամանակ բանվորը նախորոք  
պատրաստած ոլիֆախառն սուրիկով կամ  
վորելի այլ բաղադրությամբ քսում է մուֆ-  
թային փորակները: Խողովակները փոխա-  
դրելիս հաճախ փորակները լցվում են ցեխով:  
Վորպեսզի փորակները մաքրվի, հարկավոր  
ե սկզբում նալթ քսել, վորը փափկացնում  
և ցեխը, և այն ժամանակ մաքրումն արա-  
գացվում է: Փորակների քսումն ու մաք-  
րումն ավտորտեղով, բանվորը յուղում ե  
մաքրված փորակները և ապա ավագ և  
պատրաստում՝ գործիքը սրբելու համար:

Աշխատանքն ավարտում են միաժամանակ կլյուչնիկը և բանվորը: Վերջինս հորի բերանին և տեղադրումնախապահանողական ֆլանցը (ձագարաձև նկար 2), վորպեսզի խողովակների ծալքերն ուղղեն հորի կենտրոնին:



Նկար 2.

Դրանից հետո անցնում են 3-րդ և հիմնական աշխատանքին—խողովակների իջեցմանը: Ձագարը յերկաթից ե, տասը սանտիմետր խորությամբ, նրա ֆլանցներն ունեն յերեք սանտիմետր հաստություն: Ցեղեն հորը 6" և, ձագարի անցքերը 5<sup>1</sup>/<sub>4</sub> դույմ են:

Խողովակների իջեցումը նորը  
յեվ նրանց բարձրացումը

Կլյուչնիկը և բանվորը պետք ե լավ իմանան իրանց տեղը և թե ով ինչ պետք ե տնի, վորպեսզի իրարանցում և դանդաղ զոտություն չստեղծվի: Նրանք միասին վերցնում են ելեվատորը և դնում խողովակի վրա: Բանվորը փակում է ելեվատորը, վորից հետո յերկուսով ելեվատորի տակ շտրոպներ են դնում: Աշխատանքին հետեւ վում և տրաքտորի արգելակողը և այն մոմենտին, յերբ շտրոպները հագցվում են, ընթացք և տալիս մեքենային, վորպեսզի ավելորդ ժամանակ չկորչի: Խողովակն ելեվատորի և շտրոպների հետ բարձրացվում ե, կլյուչնիկը բանալին դնում և խողովակի վրա, պահելու համար, իսկ բանվորն այդ ժամանակ դիտում է շարլոնը խողովակների միջով անցնելուն և նախապատրաստում ե հետեւյալ խողովակը: Յերբ խողովակն արդեն բարձրացված ե, կլյուչնիկը մաքրում և փորակը, իսկ բանվորը վերցնում է բանա-

լին և դնում խողովակի վրա։ Սկսում են  
նրան անց կացնել մուֆտի փորակին։ Աշ-  
խատանքի ժամանակ չեն խոսում, վորպեսզի  
ժամանակ չկորցվի։

Խողովակների բարձրացումը կատարվում  
է հետեւյալ ձևով՝ կլյուչնիկը և բանվորը  
միասին նախապատրաստում են գործիքը  
(բանալիները, ելեվատորը)։

Ելեվատորը դնում են խողովակի վրա,  
բանվորը փակում ե այն, իսկ կլյուչնիկը  
վերցնում ե պղնձե մուրճը և նրանով խփում  
է մուֆտային։ Այդ նույն ժամանակ բան-  
վորը բանալին դնում ե խողովակին, կլյուչ-  
նիկը վերցնում ե մյուս բանալին, ամրաց-  
նում է նրան (դնում ե մուֆտի վրա),  
այնուհետեւ սկսում ե հետ պտտեցնելով  
հանել խողովակը։ Սովորաբար խողովակը  
հանվում է մուֆտին մի քանի հարվածներ  
տալուց հետո միայն։ Հարվածները պետք ե  
տալ խողովակի շուրջը և թուլ կերպով,  
վորովիետե ուժեղ հարվածներից մուֆտերը  
արաքում են և ավարիա յե առաջանում։  
Հանած խողովակը բանվորը մի կողմ և

տանում և դնում սահնակի վրա։ Արգելա-  
կողը «բոշ» ե (այսինքն իշեցնում ե) տալիս,  
այդ ժամանակ բանվորն ուղեկցում ե սահ-  
նակի վրայի խողովակը մինչև կամուրջի  
կեսը, դարսում ե տեղը և վերադառնում ե  
բուրգը։ Կլյուչնիկը բանվորի հետ վերցնում  
են շտրոպները, անջատում են նրանց կա-  
մուրջի վրա դրած խողովակից և իսկույն  
հազցնում են հորի բերանի վրա գտնվող  
ելեվատորի վրա։ Արգելակողն անում ե  
«բաս» (այսինքն բարձրացնում ե)։

Կլյուչնիկը և բանվորը միասին ելեվա-  
տորը հանում են խողովակից և դնում են  
այն հորի բերանին։ Բանվորը դեպի կա-  
մուրջն ե ուղեկցում հանած և բարձրացրած  
խողովակը և տեղավորում ե նրան։

Պայմաններ, վորոնի արագացնում  
յեվ լավացնում են աշխատանքը

Խողովակներն իշեցնելիս և բարձրացնե-  
լիս շատ կարեվոր ե տալ առավելագույն  
արագություն, ըստ վորում այդ պետք ե

համաձայնեցնել հորի մեջ յեղած խողովակների կշռին և բլոկների սարքումի հետև կլյուչնիկը պետք է հասկանա բեռնավորման և դիմադրության հաշիվները:

Խողովակների մեծ կշռի գեղքում՝ բարձրացման պլրոցեսսի սկզբում, սարքումը պետք է բաղկացած լինի  $4 \times 5$  անվակից, այնուհետև ըստ բարձրացման կարելի յերճատել սարքումը, սկզբում  $3 \times 4$ , հետո  $2 \times 3$  և վերջապես  $1 \times 2$  անվակով:

Սարքումի այդպիսի հաջորդական փոփոխությունն զգալիորեն արագացնում է բարձրացումը: Իջեցման ժամանակ պետք ե սկսել  $1 \times 2$  սարքումից և հորի բավականաչափ խորության դեպքում հասցնել այն մինչև  $4 \times 5$ :

Կլյուչնիկը պետք է իմանա  $2^{1/2}''$ ,  $3''$  և  $4''$  խողովակների կշռով և կանատի դիմադրականությունը: Սովորաբար աշխատում են  $\frac{3}{4}''$  կամ  $\frac{7}{8}''$  կանատով:

Կլյուչնիկը պետք է հիշի հետեւալ տըզ-լալները.

1. Խողովակների մեջ մետք տարածության կշռը՝

$4'' - 18,7$	կիլոգրամ	$  2^{1/2}'' - 9,7$	կլգ.
$3'' - 12,3$	»	$2'' - 6,8$	»

2. Նոր կանատի լրացուցիչ տացքը

$5/8''$ -ի	համար	2500	կլգ.
$3/4''$	»	3400	»
$7/8''$	»	5400	»

Ոգտվելով այս տվյալներով՝ ճշտությամբ կարելի յե վորոշել, թե ինչպիսի սարքում է հարկավոր, քանի կանատը մաշվում է, պետք է համապատասխանորեն պակասացնել թույլատրելի բեռնավորումը:

Նորմալ և արագ իջեցման և բարձրացման շատ կարեվոր պայման ե հանդիսանում հորի կենտրոնը բուրգի կենտրոնին զուգադիպելը: Յեթե շեղում կա, պետք է ժամանակին հավասարացնել:

Հորի բերանի ուղղապահ ֆլանցի կամ վորոնինի կառուցվածքի ձագարի տեղադրումը նպաստում է խողովակների իջեցման արագացմանը և նախապահպանում ե

ավարիաներից, վորոնք առաջանում են  
խողովակի ծայրը հորի յեղբին զարկելուց:

Վերջապես, աշխատանքների արագացման  
նպատակներով, անհրաժեշտ ե արակտորին  
ժամանակին տալ առաջին, յերկրորդ և  
յերրորդ արագությունները, դրան անմիջա-  
կանորեն հսկում ե արգելակողը, վորը ստոր-  
յերկրյա նորոգման բրիգադի հետ միասին  
շահագոգոված ե առաջադրանքի գերակա-  
տարման և ժամկետից առաջ ավարտման  
մեջ: Ստորգետնյա նորոգման բրիգադն աշ-  
խատանքը համաձայնեցնում ե վարպետի,  
յերկրաբանի և վարիչի հետ, ըստ վարում  
գրաֆիկը բրիգադն ստանում ե մեկ տաս-  
նորյակի համար:

Աշխատանքը կատարելով այնպես, ինչ-  
պես նկարագրված ե, յես հասա նրան, վոր  
գրաֆիկը կատարում եմ վոչ թե տասը  
որում, այլ 7 կամ 8 որում և ստանում եմ  
լրացուցիչ բնոնավորում:

Այդ պատճառով պլանը սովորաբար կա-  
տարվում է:

## Նորոգման աջաւանները

Ստորգետնյա նորոգման բրիգադի աշխա-  
տանքների մեջ, խողովակների բարձրա-  
ցումը և իջեցումը կենտրոնական տեղ և  
բռնում: Դրա հետ միասին, առանձնապես  
խորաքաջ նասսուային հորերում պետք ե  
խողովակները խնամքով շարլոնացման յեն-  
թարկեն, վորպեսզի խուսափեն պարագինո-  
տացված խողովակներ իջեցնելուց, վորով-  
հետև այդ գեպքում պլունժերն իր տեղը  
չի հասնի: Բացի խողովակների բարձրա-  
ցում-իջեցումից, բրիգադին հարկ ե լինում  
կատարել մի շարք բազմազան աշխատանք-  
ներ, ինչպես որինակ՝ շտանգների բարձրա-  
ցում-իջեցում, պլունժերի նստեցումն իր  
տեղը, հորի լվացումը խցանից ուղիղ և  
հակառակ յեղանակով, հորի հատակի մաք-  
րումն ավտոմատիկ ժելոնկայով: Հաճախ  
հարկ ե լինում, ոգտվելով հատուկ ավեր-  
շտաներով և ուրիշ վորսող գործիքներով,  
լիկիդացիայի յենթարկել շտանգների պատ-  
ռումը (տես գրաֆիկը):

## Գրաքիկ

1938 թվի հունիսի առաջին տասնորյակին  
խորհած նասոսային նորերի պլանային  
նախագործական նորոգման:

1. № 320—Ստուգել խորաքաշ նասոսի  
դրությունը . . . . . 1/VI ամիս:
2. № 310—Փոխարինել 3" խողովակներն  
ուստափորձելով № 513 հորի խողովակները  
. . . . . 1—2/VI ամիս:
3. № 248—Ստուգել խորաքաշ նասոսի  
դրությունը . . . . . 2/VI ամիս:
4. № 338—Լվանալ հորը մինչև հատակը  
(հատակը 743 մետր, ֆիլտրը 4,5 մետր)  
. . . . . 2—3/VI ամիս:
5. Պատուհան
6. № 823—Ստուգել խորաքաշ նասոսային  
խողովակի դրությունը, իջեցնել ջրի լցու-  
մով . . . . . 3—4/VI ամիս:
7. № 249—Մաքրել խցանը մինչև հա-  
տակը ժելոնկալով (հատակը 900 մ. ֆիլտրը  
897—899 մ.) . . . . . 4/VI ամիս:

8. № 298—Փոխարինել խորաքաշ 56 միլ-  
նասոսը 70 միլիմետրան. . . . . 5 VI ամիս:
  9. № 270—Փոխել խողովակը, իջեցնել  
ջրի լցումով . . . . . 5—6/VI ամիս:
  10. № 309—Մաքրել հորը 4" ժելոնկալով  
(հատակը 758 մ. ֆիլտրը 750—753 մ.)  
. . . . . 6/VI ամիս:
  11. Պատուհան . . . . . 7/VI ամիս:
  12. № 24—Փոխել խորաքաշ նասոսը լեռ-  
կար ընթացքի . . . . . 7—8/VI ամիս:
  13. 252—Մաքրել հորը մինչև հատակը  
(906 մ., ֆիլտր 5 մ.) . . . . . 8—9/VI ամիս:
  14. 543—Փոխել խորաքաշ նասոսը, մաք-  
րել խողովակները գոլորշիլով . . . . . 10/VI ամ:
- Այս բոլորը պետք ե կատարել ժամանակի  
փոքրագույն ծախսումով, յուրաքանչյուր  
կոնկրետ դեպքում կիրառելով առավելա-  
դուն եֆֆեկտիվ միջոցներ:
- Աշխատանքներն ավարտելուց հետո բրի-  
գագը հորը հանձնում ե բանելիս: Այդ  
անելուց, կազմվում ե արձանագրություն,  
վորը ստորագրվում ե նավթահանման վար-  
պետի և իմ կողմից: Դրանից հետո բրիգագն

անցնում ե նրա համար նախապատրաստած  
ուրիշ հոր:

## ՄԵՐ ԱՏԽԻԱՅԻՆՎՅԱՅԻ ՆՎՈՅՆՈՒՄՆԵՐԸ

ՄԵՐ ՀԱՆՔՈՒՄ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՆՈՐՈԳՄԱՆ  
ԱՉԽԱՏԱՆՔՔ Վաղուց իվեր կատարվում է  
յերեք վերելակով: Աշխատողների ընդհա-  
նուր քանակը, վորոնք զբաղված են ստոր-  
գետնյա նորոգումով և գտնվում են ստոր-  
գետնյա նորոգման ինժիների իրավասու-  
թյան տակ, կազմում ե 41 մարդ, վորոնք  
դասավորված են այսպես՝

ԲՐԻԴԱԳԴԻԲՆԵՐ	7
ԿԱՅՈՎՆԻԼՆԵՐ	12
ԲԱՆՎՈՐՆԻՐ	12
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԲՐԻԴԱԳ	5
ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆ ԿՐՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐ	4
ԽՈՐԱՔԱՀ ՆԱՍՈՍՆԵՐԻ ՆՈՐՈԳ- ՄԱՆ ՓՈՒԼԱՆԱԳՈՐԾ	1
ՀՆԴԱՄԵՆԸ	41

ՄԻՋԱՑՆԵՐՈՎ ԲՈՂՈՐ ԲՐԻԴԱԳԴՆԵՐԸ, յիս  
վորպես բրիդադների ղեկավար, իմ ղեկա-  
22

վարությունն անց եմ կացնում հետեւյալ  
կերպ: Առավոտյան հանքը գալով, մինչեւ  
աշխատանքների սկսվելը, ստուգում եմ  
բրիդադիբների կատարած աշխատանքների  
գրությունները: Այդ անհլիս հայտաբեր-  
վում են թերություններ, վարոնց մասին  
յիս ցուցումներ եմ տալիս բրիդադիբնե-  
րին: Դրանից հետո անցնում եմ հորերը,  
վորտեղ աշխատում են բրիդադիբները և  
ստուգում եմ կատարում տեղն ու տեղը:  
Հենց այնտեղ ել տալիս եմ բացատրու-  
թյուններ և ցուցումներ:

Ամեն մի բրիդադ գիտե թե նա ինչ պետք  
է կատարի գրաֆիկով: Նրա աշխատանքը  
գտնվում է իմ անմիջական հսկողության  
տակ, յիս հետևում եմ աշխատանքի վորո-  
շակիության, կարգապահության վրա, հրա-  
հանգում եմ կլյուչնիկներին և բանվոր-  
ներին ինչպես աշխատանքի ժամանակ,  
բանելիս, նույզես և աղատ ժամանակ:

Շնորհիվ աշխատանքի այդպիսի կազմա-  
կերպման, մեզ մոտ վոչ մի անգամ պարա-  
պուրդ, լուրջ թյուրիմացություն և ավարիա

չե յեղել: Հատկապես աշխատանքի այդպիսի կտորմակերպումը հնարավորություն տվեց իրականացնել ստախանովյան մեթոդները և ստանալ այդպիսի արդյունքներ:

1938 թվի ապրիլին, տեխնիկական նորմաները կատարվել են 153 տոկոսով (100-ի փոխարեն մայիսին 152,5 տոկոս),

Պետք ե ասել, վոր մինչև ստախանովյան մեթոդի սահմանվելը, աշխատում ելինք առանց աշխատանքի ճիշտ հաշվառման: Ներկայումս տարվում ե ճշգրիտ հաշվառում, աշխատանքը տարվում ե գրաֆիկով, վորը ստացվում ե մեկ տասնորյակի ժամանակով:

Հաշվառումն ամսական ե:

Աշխատողները շահագրգուված են իրենց աշխատանքով, դրա համար ել չկա հոսունություն, ամեն մեկն իր տեղը թանգ և գնահատում:

Այդպիսով աշխատավարձն ավելացավ: Կյուշիկներն առաջ ստանում եյին 360-ից մինչև 400 ոռւբլի, իսկ այժմ մինչև 1000, նույնիսկ 1200 ոռւբլի:

Բանվորը վաստակում եր 200-ից—500 ոռւբլի, այժմ մինչև 700 ոռւբլի:

Նավթահանումը մեր հանքում համապատասխանորեն բարձրացավ: Նավթահանման պլանը 1938 թվի մարտին կատարված և 97 տոկոսով, ապրիլին—128,3 տոկոսով, մայիսին—122 տոկոսով:

Պետք ե նշնչ, վոր ստորգետնյա նորոգման աշխատանքում և առհասարակ հանքի բոլոր աշխատանքներում խոշոր բեկում առաջացավ մեր ժողկոմ ընկ. լ. Մ. Կազանովիչի հրամանը հրապարակելուց հետո: Հենց, վոր մանք մտցրինք գրաֆիկը, հորերն սկսեցինք հանձնել արձանագրություններով, հիմնական ուշադրություն դարձրինք նախապատրաստման, ցիկլակախության վրա, հորերը յերկար կանգառումից հետո գործարկման համար մտցրինք պարզեվարության սիստեմը — աշխատանքը գնացնոր յեղանակով:

1938 թ. հունվարի 1-ին ստորգետնյա նորոգման ստախանովականներ կային 16

1938 թ. հունիսի 1-ին » 35

Բացի այդ 1938 թ. հունվարի 1-ին գործող հորեր կալին 82—83, ըստ վորում յերեք վերելակ դժվարությամբ ելին հաղթահարում աշխատանքը:

Հաճախ ելին գեպքերը, յերբ հորերը պարապուրդ ելին անում, սպասելով վերելակին:

Ներկայումս հորերի ֆոնդը բարձրացված է 89—90-ի: Ըստ վորում մենք բավական ժամանակ բավարարվել ենք յերկու վերելակով: Յերբորդ վերյելակը մենք ժամանակավորապես հանձնել ենք հարեան 4-րդ հանքին:

Անուշադրության մատնված №№ 83, 115, 215, 197 և 568 հորերը և շատ ուրիշները, վորոնք համարվում ելին անշահավետ և յենթակա ելին լիկվիդացիայի, ներկայումս մեր բրիգադներով վերականգնված են, նորմալ շահագործվում են և յուրաքանչյուրը տալիս ե ռրական 10 տոնն նավթ:

Մեր հանքում աճել են շատ հրաշալի ստախանովականներ, ինչպես բրիգադիներ՝ Վորոնինը, Թելիք Դադաշը, կլուչնիկներ՝


Հասանովը, Կարապետյանը, Գոնչարովը, վորոնք նորման կատարում են 170—180 տոկոսով:

Մեր՝ նրանց հետ, և ամբողջ կոլեկտիվի խնդիրն ե—բոլոր կանգնած հորերը գործարկել և տալ շահագործման, վորապեսզի նավթահանման պլանը վոչ միայն կատարենք 100 տոկոսով, այլ նաև գերակատարենք: Յեվ մենք կհասնենք նշված արդյունքներին, շարունակելով առաջադիմող տեխնիկայի նվաճումների յուրացումը և ամրացնելով բոլոր աշխատողների քաղաքական գիտակցությունը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բրիգադների աշխատանքը և նրանց կազմը . . . . .	3
2. Հերթափողության ընդունումը և պարտականության բաժանումը . . . . .	7
3. Նախապատրաստական աշխատանքներ . . . . .	10
4. Խողովակների իջեցումը հորը և նրանց բարձրացումը . . . . .	13
5. Պայմաններ, վորոնք արագացնում և լավացնում են աշխատանքը . . . . .	15
6. Նորոգման աշխատանքներ . . . . .	19
7. Դրաֆիկ . . . . .	20
8. Մեր ստախանովյան նվաճումները . . . . .	22



ՀՀ Ազգային գրադարան



NL0278782

ЧРЧ. 40 ЧАП.  
В.Ч-3 (2)-1

13015

103

БИБЛИОТЕЧКА СТАХАНОВЦА

И. Д. ОСЬКИН

бригадир по подземному ремонту  
треста Орджоникидзенефть

СТАХАНОВСКИЕ МЕТОДЫ

РАБОТ ПО ПОДЗЕМНОМУ РЕМОНТУ СКВАЖИН



АзГОНТИ

Баку—1939—Москва